# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 15-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԸ ԶԵՂՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերդ համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներ դիմել են Բերդի համայնքապետարան, որ վճարել են իրենց կամ իրենց հարազատների անվամբ գրանցված գույքահարկի գծով առաջացած պարտքերը և խնդրել զեղչել առաջացած տույժերը

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ մասի 1-ին կետով, 5-րդ, և 8-րդ մասերի պահանջներով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Սամվել Մխիթարյանի անվամբ գրացված OPEL FRONTERA 2.8TDI մակնիշի 210S927 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ,առաջացած տույժի 4231 ՀՀ դրամի չափով:
2. Մարտուն Ասրյանի անվամբ գրացված ՎԱԶ 21043 մակնիշի 34RL345 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ,առաջացած տույժի 9104 ՀՀ դրամի չափով:
3. Տավուշ կաթ արտադրական Ս/Կ անվամբ գրացված GAZ 33027-418 մակնիշի 281LS59 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ,առաջացած տույժի 21389 ՀՀ դրամի չափով:
4. Արմեն Հարությունյանի անվամբ գրացված 11-002-0029-0060-001 արտադրական նշանակության շինության գույքահարկի գծով կատարել զեղչ,առաջացած տույժի 9561 ՀՀ դրամի չափով:
5. Համլետ Անանյանի անվամբ գրացված ԳԱԶ-66-01 մակնիշի 07UO212 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ,առաջացած տույժի 6296 ՀՀ դրամի չափով:
6. Արմեն Քոչարյանի անվամբ գրացված UAZ HUNTER մակնիշի 34MM991 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ,առաջացած տույժի 2093 ՀՀ դրամի չափով:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 16-Ա**

## ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ, ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 2017 թվականի հունիսի 9-ի ՀՀ օրենքի 1-ին հոդվածով և 18.53 հավելվածով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն նախկին Նորաշենի գյուղապետարանի անվամբ գրանցված UAZ 31512 մակնիշի, 088LL70 պետհամարանիշով տրանսպորտային միջոցը և ZIL131 մակնիշի 087LL70 պետհամարանիշով տրանսպորտային միջոցը անվանափոխել Բերդ համայնքի անվամբ, իսկ տրանսպորտային միջոցների գույքային արժեքները թողնել անփոփոխ:

2. Բերդ համայնքի սեփականության հանդիսացող բազմաֆունկցիոնալ էքսկավատորը CAT 426F2 մակնիշի, 2149LL պետհամարանիշով 38,880,000/ երեսունութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ արժեքով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Բերդի կոմունալ ծառայություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

3.Կատարել տրանսպորտային միջոցների անվանափոխում հաշվառում ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստկանության» բաժանմունքում:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 17-Ա**

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-010-0333-0112 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.48 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Այգեձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.48 հա մակերեսով արոտավայրը աճուրդով օտարելու համար, ծածկագիրը՝ 11-010-0333-0112:

2.Մեկնարկային գինը սահմանել՝200,000 ՀՀ դրամ:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 18-Ա**

## ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի դրույթներով, Բերդ համայնքի ավագանու 30 ապրիլի 2015թ. N 11-Ա որոշմամբ և հաշվի առնելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Լևոն Բեկի 5 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի N 13 սենյակը՝ 19.63 քմ մակերեսով, վարձակալությամբ, տարեկան 240000 ՀՀ դրամ վարձավճարով, որը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 13-ը տրամադրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմին՝ բժշկասոցիալական փորձաքննության աշխատանքներ իրականացնելու համար, կնքել համաձայնագիր վարձակալության ժամկետը 1/մեկ/ տարով երկարաձգելու վերաբերյալ:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**28 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 19-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՎԱՐՈՒԺԱՆ ԳԱՌՆԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

***Համայնքի ավագանին որոշում է՝***

1.Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Տավուշի մարզի Բերդ համայնքի, Բերդ քաղաք, Տավուշեցու փողոց, 52 բնակելի տուն հասցեում գտնվող 50.4 /հիսուն ամբողջ չորս տասնորդական/ ք.մ մակերեսով արտաքին չափերով և 44.32 /քառասունչորս ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական/ք.մ մակերեսով ներքին չափերով բնակելի տունը՝ 166320 /հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր քսան/ ՀՀ դրամով և նրա պահպանման ու սպասարկման 397.4/երեք հարյուր իննսունյոթ ամբողջ չորս տասնորդական/ ք.մ մակերեսով հողամասը՝ 321894 /երեք հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Վարուժան Գառնիկի Մելիքյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 20-Ա**

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11-002-0264-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.4 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Բերդ քաղաքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.4 հա մակերեսով վարելահողը աճուրդով օտարելու համար, ծածկագիրը՝ 11-002-0264-0001:

2.Մեկնարկային գինը սահմանել՝380,000 ՀՀ դրամ:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 21-Ա**

### ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ 0.43202 հա ՄԱԿԵՐԵՍՈՎ, 11-030-0096-0011 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Տավուշ գյուղ, 26-րդ փողոցի 21 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերից 0.43202 հա մակերեսով հողամաս աճուրդով օտարելու համար, ծածկագիրը՝ 11-030-0096-0011:

2.Մեկնարկային գինը սահմանել՝627,000 ՀՀ դրամ:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 22-Ա**

## ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ 0.04 հա ՄԱԿԵՐԵՍՈՎ, 11-002-0040-0059 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀօրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով,որ նշված հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և հիմք ընդունելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն Տավուշի մարզի, Բերդ համայնքի, Բերդ քաղաքի, Խորենացու 101 հասցեում գտնվող համայնքային սեփականության բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերից 0.04 հա մակերեսով հողամաս աճուրդով օտարելու համար, ծածկագիրը՝11-002-0040-0059:

2.Մեկնարկային գինը սահմանել՝330,000 ՀՀ դրամ:

3.Ուժը կորցրած ճանաչել Բերդ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 26-ի N 147-Ա որոշումը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**28 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 23-Ա**

## ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Բերդ համայնքի, Բերդ քաղաքի, Մաշտոցի 1 հասցեում հաշվառված Հերմինե Արամայիսի Ուդումյանի ընտանիքը փաստացի մնացել է անօթևան, նրանք դիմել են համայնքապետարան վագոն տնակ գնելու հարցում իրենց օգնելու խնդրանքով: Հիմք ընդունելով նաև Տավուշ գյուղի վարչական ղեկավար Արթուր Հովհաննիսյանի զեկուցագիրը, որ Տավուշ գյուղի բնակչուհի Սոֆյա Մարալյանի ընտանիքը գտնվում է սոցիալապես ծանր վիճակում,իսկ ինքը ունի հոգեկան խնդիրներ

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Բերդ համայնքի, Բերդ քաղաքի, Մաշտոցի 1 հասցեում հաշվառված Հերմինե Արամայիսի Ուդումյանի ընտանիքի համար վագոն տնակ գնելու նպատակով հատկացնել 300,000/երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ օգնություն:

2.Բավարարել Տավուշ գյուղի վարչական ղեկավար Արթուր Հովհաննիսյանի զեկուցագիրը և ՍոՖյա Սերյոժայի Մարալյանի ընտանիքին պատկանող բնակելի տան վերանորոգման աշխատանքների իրականացնելու համար տրամադրել 300,000/երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ օգնություն:

3.Բերդ համայնքի, Այգեձոր գյուղի 24.02.2020թ. վթարի հետևանքով տուժած ընտանիքներին հատկացնել 855,000/ութ հարյուր հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ օգնություն:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 24-Ա**

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԾԱՌԵՐԸ ԿՏՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,հիմք ընդունելով նաև ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Տավուշի տարածքային բաժնի թիվ 034 մասնագիտական եզրակացությունը, ՀՀ Սահմանադրության 183-րդ հոդվածի 1-ին 2-րդ և 3-րդ մասերով, ՀՀ Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի օգտագործելու այն ամենը, ինչը գտնվում է իր հողամասի մակերեսին և դրա տակ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով ու չի խախտում այլ անձանց իրավունքները

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Բնակիչների և համայնքային գույքի պահպանան անվտանգության նկատառումներից ելնելով, տալ համաձայնություն Բերդ համայնքի վարչական տարածքում գտնվող և համայնքային սեփականություն համարվող ծառերը կտրելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ